

## ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2 ԿՈՅ ԶՅ Ծ ԱձԾ ՈՒ ՍՅ Կ ՆՅ ՍՅ Ի

**Պատասխանատու անձ՝**  
Տաթևիկ Զոհրաբյան, ՏՀՆ ծրագրերի  
ղեկավար, [tatevik@crcccenters.org](mailto:tatevik@crcccenters.org)

### **Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստանը ներկայացնելու է 2008թ. բնակչության շրջանում կոռուպցիայի վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները**

*Երևան, Հայաստան. Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ ծրագրի հայաստանյան կենտրոնը, ս.թ. հուլիսի 21-ին ներկայացրեց ԱՄՆ ՄՁԳ-ի Հակակոռուպցիոն գործողության մոնիթինգային ծրագրի (ՀԳՄԾ) շրջանակներում 2008թ. իրականացված կոռուպցիայի վերաբերյալ հետազոտության հիմնական արդյունքները: Տնային տնտեսությունների հետազոտությունն ընդգրկել է 1549 չափահաս Հայաստանի բոլոր մարզերի տնային տնտեսություններին:*

Ներկայիս տնտեսական ճգնաժամը նորերս է զգալիորեն ազդել Հայաստանի, ինչպես և առհասարակ Հարավային կովկասի վրա, սակայն կոռուպցիան մշտական ուղեկիցն է եղել թե՛ համընդհանուր ճգնաժամի, և թե՛ վերելքի ժամանակներում: Կոռուպցիայի վերաբերյալ հետազոտությունը հնարավորություն է ընձեռում քննության առնելու ընդհանուր ընկալումները, անձնական փորձառությունը և կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն գործողությունների մասին տեղեկացվածությունը:

Ըստ հետազոտության տվյալների, բնակչության 86%-ը կոռուպցիան Հայաստանում համարում է շատ լուրջ հիմնախնդիր: Ընդհանուր առմամբ, կոռուպցիայի մակարդակը բարձր է համարվում ընտրական համակարգում (այն նշել են հարցվածների 66%-ը), ոստիկանությունում (66%), առողջապահության (61%) և կրթության (58%) ոլորտներում: Ինչ վերաբերում է պետական հատվածին, ապա հարցվածների 45%-ը համարում է, որ կոռուպցիան առավել մեծ տարածում ունի բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում, մինչդեռ միայն 9%-ն է կարծում, որ այն առավել տարածված է ցածր օղակներում:

Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ ընկալումները հակասական են. հարցվածների 95%-ը կոռուպցիայի ձև է համարում դատավորին կաշառելը, մինչդեռ պաշտոնատարների կողմից ծառայողական մեքենան անձնական նպատակներով օգտագործելը որպես կոռուպցիոն գործողություն ընկալում միայն 37%-ը: Կոռուպցիոն վարքագծի առնչությամբ փոքր-ինչ հուսադրող է այն փաստը, որ թեև հարցվողների 53%-ը պատրաստակամ է կաշառք տալու (եթե պահանջեն), 72%-ն այն չի ընդունի (եթե առաջարկեն): Հետաքրքրական է, որ կոռուպցիոն վարքագծի դրդապատճառների թվում պատժվելու վտանգը էական դեր չունի. պատժվելու բարձր ռիսկը մատնանշել են կաշառատվությունից ձեռնպահ մնացողների միայն 5%-ը, և այն ընդունելու պատրաստ մարդկանց միայն 11%-ը:

Առավել մտահոգիչն այն է, որ հարցվածների ավելի քան կեսը հավատացած է, որ կոռուպցիան կրճատելու ուղղությամբ անձամբ ոչինչ չի կարող անել: Հարցվածների կարծիքով, կառավարությունը ևս շատ բան չի անում. երևանցիների 52%-ը չեն համաձայնել այն մտքի հետ, թե կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարելու անկեղծ ցանկություն ունի, մինչդեռ այլ քաղաքներում ու գյուղական վայրերում հակառակ կարծիքի են մոտ 60%-ը:

Չնայած կառավարության և հասարակության անհամարժեք ջանքերին, հանրության կարծիքով, կոռուպցիայի մակարդակը Հայաստանում փոքր-ինչ նվազել է. հարցվածների 30%-ը հավատացած է, որ նախորդ տարվա համեմատ այն սակավացել է, և միայն 17%-ն է տրամազծորեն հակառակ կարծիքի:

Այս ուսումնասիրությունն, ամենայն հավանականությամբ, կնպաստի Հայաստանի կառավարության և ՀԿ-ների կողմից կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ՝ հանրային կարծիքի հաշվառմամբ, ռազմավարության մշակմանն ու իրականացմանը, ինչպես նաև քաղաքացիների գորակցմանն իրենց շահերը պաշտպանելու:

Հետազոտության նյութերը ազատորեն հասանելի են [ՀՈԿԿ-Հայաստանի էջկայքում](#), ինչպես նաև լազերային սկավառակով:

---

**ՀՈԿԿ-Հայաստանի մասին.** ՀՈԿԿ-Հայաստանը՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի մայրաքաղաքներում 2003թ. հիմնված և տարածաշրջանում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակ հետապնդող հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանցի մի մասն է: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի գործակցությամբ գործող ՀՈԿԿ-Հայաստանը տեղացի գիտնականներին և պետական գործիչներին առաջարկում է հետազոտությունների, դասընթացների և համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: [www.crrc.am](http://www.crrc.am)

**ՀԳՄԾ-ի մասին.** Մեկնարկելով 2007թ. հուլիսին որպես համապարփակ հակակոռուպցիոն նախաձեռնություն, որի նպատակն է կոռուպցիայի նվազեցումը թե՛ տեղական, թե՛ համակարգային մակարդակներում՝ ԱՄՆ ՄՁԳ ՀԳՄԾ-ն օժանդակում է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին՝ ստեղծելով բողոքների արձագանքման մեխանիզմներ և իրականացնելով համակարգային ու ընթացակարգային բարեփոխումներ, մշակելով և իրականացնելով հակակոռուպցիոն նախաձեռնություններ ընտրված պետական մարմինների հետ, օժանդակելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հակակոռուպցիոն գործողության համախմբմանն ուղղված նորարար մոտեցումներ մշակելու, ինչպես նաև բարձրացնելով հակակոռուպցիոն իրազեկության մակարդակը երիտասարդների և մեծահասակների շարքերում: [www.maac.am](http://www.maac.am)